600.0043.30.12.99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի 1999 թվականի №43
ք. Երևան

Էլեկտրաէներգետիկական ոլորտի սակագների մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և 20-րդ հոդվածի ա) կետով, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել՝

1.1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը, ներառյալ ավելացված արժեքի հարկը՝ 10.527 դրամ/կՎտժ:

1.2. Ջերմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի հետևյալ սակագները, ներառյալ ավելացված արժեքի հարկը՝

- «Երևանի ՋԷԿ» ՊՓԲԸ՝ 18.967 դրամ/կՎտժ

- «Հրազդանի ՋԷԿ» ՊՓԲԸ՝ 17.503 դրամ/կՎտժ

1.3. «Երևանի ՋԷԿ» ՊՓԲԸ - ից առաքվող ջերմային էներգիայի (շոգու տեսքով) հետևյալ սակագները, ներառյալ ավելացված արժեքի հարկը՝

«Նաիրիտ» ՊՓԲԸ - ին առաքվող՝

13 մթն գոլորշի՝ 8906 դրամ/Գկալ

25 մթն գոլորշի՝ 8906 դրամ/Գկալ

1.4. Էլեկտրական կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի հետևյալ սակագները, ներառյալ ավելացված արժեքի հարկը՝

- «Որոտանի ՀԷԿ - երի համալիր» ՊՓԲԸ՝ 2.848 դրամ/կՎտժ

- «Սևան - Հրազդանյան ՀԷԿ - երի կասկադ» ՊՓԲԸ՝ 5.472 դրամ/կՎտժ

1.5. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՊՓԲԸ - ի էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության սակագինը՝ 1.090 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.6. «Հայէներգո» ՊՓԲԸ ծառայության սակագինը՝ 0.488 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.7. Բաշխող ընկերություններին «Հայէներգո» ՊՓԲԸ-ի կողմից վաճառվող էլեկտրաէներգիայի հետևյալ սակագները, ներառյալ ավելացված արժեքի հարկը՝

«Երևանի էլեկտրացանց» ՊՓԲԸ-ին՝ 16.026 դրամ/կՎտժ

«Կենտրոնական էլեկտրացանց» ՊՓԲԸ-ին՝ 12.153 դրամ/կՎտժ

«Հյուսիսային էլեկտրացանց» ՊՓԲԸ-ին՝ 9.841 դրամ/կՎտժ

«Հարավային էլեկտրացանց» ՊՓԲԸ-ին՝ 13.820 դրամ/կՎտժ

2. Ընդունել ի գիտություն, որ բաշխիչ ընկերություններին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագներում ներառված է նաև «Հայէներգո» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՊՓԲԸ-ների ծառայության սակագները:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998թ. նոյեմբերի 6-ի N48 որոշման 1-ին կետը, 1998թ. նոյեմբերի 7-ի N49 որոշման 1-ին կետը և 3-րդ կետի՝ «Նաիրիտ» ՊՓԲԸ առաքվող ջերմային էներգիայի սակագների մասը, 1998թ. նոյեմբերի 10-ի N51 որոշումը, 1999թ. հունիսի 30-ի N16 որոշման 1-ին և 2-րդ կետերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2000 թվականի փետրվարի 1-ից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահի տեղակալ՝ Ն. Գրիգորյան